Բաբկեն Հարությունյան, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 2016, 304 էջ

Հայկական նախարարական տների պատմության խորքային էջերի վերհանումը կարևորվում է տարբեր տեսանկյուններից: Նախ դա հնարավորություն է ընձեռում ճիշտ և համակողմանիորեն պատասխանել մի շարք հարցերի. ե՞րբ են առաջացել այդ տները, ի՞նչ դեր են դրանք ունեցել հայոց պետականության անկման կամ ամրապնդման գործում, արդյո՞ք երբեմնի տարակարծությունները և հակընդդեմ կեցվածքը Արշակունիների նկատմամբ, որոնք հանգեցրել են նաև դավաճանության, պատճառաբանված են եղել պետականության ամրապնդման այլընտրանքային ծրագրերով, թե՞ իշխանատենչության հետևանք էին, ինչպիսի՞ ճակատագրերի են արժանացել իշխանական տների ներկայացուցիչները պետականությունների անկումից հետո, ի՞նչ դեր են նրանք խաղացել հայ ժողովրդի ճակատագրում:

Այս և համանման հարցերի պատասխանները նշանավոր և հզոր իշխանական տներից մեկի՝ Արծրունիների գործունեության մասին հայ և օտարալեզու սկզբնաղբյուրների, ինչպես նաև պատմագիտական ուսումնասիրությունների պատմաքննական վերլուծության հիման վրա տվել է հանգուցյալ պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը (1941-2013) գրախոսվող աշխատության մեջ, որը կարևորագույն տեղ է զբաղեցնելու նրա գիտական հարուստ ժառանգության մեջ:

Արծրունիների դերը մեր պատմության մեջ հակասական գնահատականների է արժանացել նրանց ծագումից ի վեր: Բ. Հարությունյանի մենագրության ներածությունից կարելի է ենթադրել, որ սույն թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ հեղինակը Արծրունիներին համարել է «նշանավոր մեծամեծ ու ընտիր» նախարարություններից մեկը, որոնց «թիվն իրականում չի անցել երկու տասնյակից» (էջ 3): Ուստի նրանց տոհմի պատմությունը հեղինակը համարում է «հայոց պատմության անքակտելի մասը» (էջ 4):

Արծրունիները, ըստ հեղինակի համոզման, եկվորներ են, և այդ մասին է վկայում մենագրության առաջին գլխի վերնագիրը՝ «Արծրունյաց տոհմի հանդես գալը Հայաստանում»: Արծրունիների ծագման խնդրին վերլուծական անդրադարձ կատարելուց հետո Բ. Հարությունյանը փորձում է ճշգրտել Ասորեստանից Հայաստան տեղափոխվելուց հետո նրանց նախնիների բնակության սկզբնական վայրը: Նա հանգում է տրամաբանական եզրակացության. Արծրունիների նախնին՝ Ադրամելեքը, Ասորեստանից Հայաստան է փախել մ. թ. ա. 681 թ., և անհնար է պարզել, թե նրան և Սանասարին որ-

տեղ է բնակեցրել Պարույր Սկայորդին: Հեղինակը ենթադրում է, որ Ադրամելեքի մահից հետո նրա սերնդից Արդամոզանը հաստատվել է Բերկրի քաղաքի շրջակա տարածքում՝ «կենտրոն ունենալով Արծրունիունի քաղաքը, որից էլ Արծրունիները ժառանգում են իրենց հայկական տոհմանունը» (էջ 19): Եթե այս տեսակետն ընդունելի համարենք, ապա իսկապես հարկ է սատարել Արծրունիների եկվոր լինելու վարկածը, մանավանդ որ այս տարածաշրջանում ծագած և այս ազգանվան հիմքում ընկած «արծիվ» բառը չէր կարող ունենալ Ասորեստանից փախած անձը:

Ապա Բ. Հարությունյանը մանրազնին քննության է ենթարկում վաղնջական ժամանակշրջաններում Արծրունիների տոհմի՝ Հայաստանում ունեցած կալվածքների և քաղաքական առումով գրված դիրքի խնդիրները: Հընթացս նա կրկին անդրադառնում է վերջիններիս անվան ծագմանը, վիճարկում կամ ընդունում թե՛ այդ խնդրին և թե՛ նրանց բնակավայրերին ու իրավունքներին կամ պաշտոններին առնչվող տեսակետները, որոնք սկիզբ են առել Մովսես Խորենացու ու Թովմա Արծրունու երկերից և քննարկվել ավելի ուշ ժամանակաշրջանի հետազոտողների կողմից: Գնահատելի է, որ հեղինակը Արծրունիների տոհմի պատմության նրբերանգները լուսաբանելիս արծարծում է հայոց հին և միջնադարյան պատմությանն առնչվող խնդիրներ, փաստարկված և տրամաբանված հերքում պատմական բազում իրողություններ կամ ենթադրություններ: Բերենք մեկ օրինակ՝ բդեշխների մասին նրա հայտնած տեսակետը. «Բդեշխները սկզբում եղել են երեց նախարարներ զինվորական տեսակետից և սեփական տիրույթներ չեն ունեցել: Նրանք պարզապես գլխավորել են թևերի բաժանված արքունական զորքերը: Ավելի ուշ է, որ բդեշխները տիրանում են հողերի ու կալվածքների, որի արդյունքում ծնվում է այն միտքը, թե նրանք սահմանապահ կառավարող իշխաններ էին» (էջ 34): Նա հերքում է նաև Վ. Վարդանյանի և Յ. Մարկվարտի տեսակետները, ըստ որոնց՝ Արծրունիներն ունեցել են բդեշխական իրավունքներ՝ կապված մասնավորապես Աղձնիքի և Նոր Շիրականի հետ: Վերջինս ձևավորվել էր 298 թ.՝ Մծբինի պայմանագրից հետո, երբ Սասանյան Պարսկաստանի Շիրական աշխարհի մի մասն անցել էր Մեծ Հայքին՝ կոչվելով Նոր Շիրական: Այս հերքումը նա կատարում է բդեշխությունների ծագման վերաբերյալ տեսակետների հակասականության բացահայտումներով և ապացուցում, որ Արծրունիները չեն եղել Աղձնիքի և Նոր Շիրականի բդեշխներ:

Բավական հետաքրիր և նոր հարցադրումներով հարուստ է Արտաշիսյանների և Արշակունիների օրոք Արծրունիների տոհմին նվիրված աշխատության երկրորդ գլուխը: Ըստ Բ. Հարությունյանի՝ Արտաշիսյանների շրջանում նրանց կարգավիճակի կամ դերկատարությունների շուրջ դատողություններ անելը շատ դժվար է, քանի որ սկզբնաղբյուրները քիչ են և վերաբերում են հիմնականում Թովմա Արծրունուն, որի տեղեկությունները հնարավոր չէ հերքել, ինչպես նաև լիարժեք կամ ճշմարիտ համարել: Բայց նա այն

տրամաբանված կարծիքն է հայտնում, որ եթե վերջինս իր ձեռքի տակ չունենար բանավոր կամ գրավոր զրույցների տեսքով պատմություններ, «ապա հազիվ թե կարողանար շոշափել իր տոհմի մասնավորապես վաղնջական ժամանակների պատմությունը» (էջ 36): Հենվելով Թովմա Արծրունու տեղեկությունների վրա՝ նա հանգում է այն տեսակետին, որ Արծրունիներն իրենց հիմնական տիրույթներում հաստատվել են Արտաշես Ա-ի օրոք, և ճշգրտում է դրանց աշխարահագրական շրջանակները: Ապա նա ցույց է տալիս Արծրունիների տոհմի տեղը հայոց պատմության մեջ Արշակունիների օրոք՝ վերջիններիս կառավարման սկզբնական շրջանից մինչև ավարտը: Դրվատելի է, որ հեղինակն այս ժամանակաշրջանում Արծրունիների գործունեության գնահատման խնդրում իրեն դրսևորում է անկողմնակալորեն, ցույց տալիս վերջիններիս թե՛ դրական և թե՛ բացասական դերակատարությունները:

Բ. Հարությունյանը բավական նրբորեն է լուսաբանում, օրինակ, Մերուժան Արծրունու դավաճանական քայլերի դրդապատճառները՝ դրանք պայմանավորելով ներքին և արտաքին գործոններով, քննադատում է բոլոր այն ձգտումները, որոնք միտված էին Արշակունյաց թագավորության անկմանը վերջիններիս և այլ դավաճան նախարարների կողմից: Հատկապես ուշագրավ է, որ Արծրունիների տոհմի պատմության խորքային ծալքերը լուսաբանելիս նա մշակում է նոր հայեցակարգեր Հայր Մարդպետների գործունեության վերաբերյալ, որոնք ըստ մեր պատմիչների՝ եղել են ավելի շատ բացասական նկարագրի տեր անձնավորություններ: Բավական հետաքրքիր է նրա այն հայեցակետը, որ Հայր Մարդպետները, լինելով ներքինիներ, տրամաբանորեն չէին կարող կալվածքների առգրավման հարցով դիմել նախարարներին կամ եկեղեցուն, քանի որ ժառանգներ չունեին: Ուստի նրանց նպատակը պետության ամրապնդումն էր և կենտրոնախույս ձգտումների վերացումը, որոնցից զերծ չէին նաև Արծրունիները, որոնք Արշակունիների շրջանում մի պահ հասան բնաջնջման եզրին: Իսկ նրանց թագավորության վերջին շրջանում Արծրունիները ծավալել են խիստ հակասական գործունեություն: Նրանցից ոմանք եղել են երկդիմի, ոմանք՝ հայրենասեր, իսկ ոմանք նպաստել են Վռամի կողմից վերջին Արշակունու գահընկեցությանը: Բ. Հարությունյանը փաստերի համադրման և բարեխիղճ քննության հիման վրա լուսաբանում է Արծրունիների տոհմի տարբեր ներկայացուցիչների գործունեությունը և հայեցակետեր առաջադրում դրա պատճառների և հետևանքների մասին, որոնք, ցավոք, դրական նշանակության առումով հարաբերական են եղել թե՛ իրենց և թե՛ հայոց պետականության համար առհասարակ:

Հայաստանի անկախության վերկանգնման համար մղվող պայքարի ժամանակաշրջանում Արծրունյաց տան դերակատարության առնչությամբ Բ. Հարությունյանը շարունակում է առաջադրել նոր հայեցակետեր, այդ թվում՝ նաև հայ ժողովրդի պատմության առանձին դրվագների վերաբերյալ:

Քանի որ Արծրունիների պատմությունը հայոց պատմության անքակտելի մասն է, ապա նա գնահատում է նրանց ազդեցությունը Հայաստանի համար պատմական նշանակություն ունեցող իրադարձությունների համատեքստում: Իսկապես, նա չի սխալվում՝ այն ընկալումը մեզ ներշնչելով, որ Արշակունյաց արքայատոհմի անկումից հետո Սասանյան Պարսկաստանը թեև իր տիրապետության տակ էր պահում մեր երկիրը, բայց իրականում այն փաստորեն կիսանկախ էր, գտնվում էր նախարարների իշխանության ներքո, որոնք թեև հարկ էին տալիս պարսիկներին, բայց հայոց այրուձին նախարարների առաջնորդությամբ էր պայքարի դուրս գալիս: Սրանով պետք է պայմանավորել Հազկերտի քաղաքականությունը նրանց նկատմամբ, որը կրոնափոխության քողի տակ ավելի շատ նպատակ ուներ հայ նախարարներին զրկելու իրենց ուժից և երկիրը վերածելու պարսկական նահանգի: Մինչև վարդանանց պատերազմը Արծրունիները, ըստ հեղինակի, չի կարելի ասել, որ վարել են պարսկամետ քաղաքականություն, իսկ այդ պատերազմի ժամանակ ցանկացել են վերականգնել հայոց թագավորությունը: Ավելին՝ Վահան Արծրունին թագավորի թեկնածու է եղել Վարդան Մամիկոնյանից առաջ: Այս պատերազմին Արծրունիներն առհասարակ ակտիվորեն մասնակցել են: Բավական հետաքրքիր է հեղինակի տեսակետն Ավարայրի ճակատամարտի մասին, որին, ըստ նրա, Վարդան Մամիկոնյանը մասնակցել է իբրև հայոց թագավոր: «Վարդանանց պատերազմի բարձրակետը,– գրում է նա,– անկասկած Ավարայրի ճակատամարտն էր: Դրա արդյունքները կարող էին միանգամայն այլ լինել, եթե հայոց արքա Վարդան Մամիկոնյանը փոխանակ ճակատամարտը ղեկավարելու, չնետվեր մարտադաշատ, և նրա զոհվելուց հետո զորքը չմնար առանց հրամանատարի» (էջ 97): Այս մոտեցման ճշմարտացիության մասին եզրակացությունները զանց առնելով՝ նշենք միայն, որ ըստ հեղինակի կարծիքի՝ Ավարայրը պարտություն էր, այլ ոչ թե հաղթանակ՝ անգամ բարոյական:

Բ. Հարությունյանը քննում է նաև Արծրունիների պատմությունը 481/482-484 թթ. ժողովրդաազատագրական պատերազմի ընթացում, երբ վերջիններս, նրա կարծիքով, կրավորական կեցվածք են որդեգրել: Հենվելով պատմիչների տեղեկությունների վրա՝ նա Արծրունիներից Վահան Մամիկոնյանին հավատարիմ է համարում Յաշկուրին և Մերշապուհին, որոնք, չլինելով ակտիվ, նաև պարսկամետ չէին: Վահան Մամիկոնյանի մարզպանության շրջանում Արծրունիներն օրինականացնում են տանուտիրական իրավունքը իրենց իշխանության սահմաններում:

Ինչ վերաբերում է 571-572 թթ. հակապարսկական ապստամբությանը, ապա հեղինակն այն կարծիքին է, որ Արծրունիները չեն մասնակցել դրան, ինչպես այլ հայ նախարարներ, որոնք Վահրամ Չուբինին օգնելու փոխարեն օգնել են Խոսրով Անուշիրվանին, երբ նրա դեմ ապստամբել է իր քեռի Վստամը: Նման դիրքորոշումը նպաստել է նրանց և պարսից արքունիքում մեծ հեղինակություն վայելող Սմբատ Բագրատունու մերձեցմանը, որի զի-

նակիցների թվում հիշատակվում է Վարազշապուհ Արծրունին՝ իր զորագնդով:

Հեղինակը վերլուծում է արաբների կողմից Հայաստանը գրավելու գործընթացը, ցույց տալիս հայ ժողովրդի նկատմամբ նրանց քաղաքականության մեղմացման, ապա խստացման պատճառները, ինչպես նաև Արծրունիների կողմնորոշումներն այդ ժամանակաշրջանում: Ընթերցելով նրա հետաքրքիր քննությունները՝ համոզվում ենք, որ հիշյալ ժամանակահատվածում Արծրունիներն ամրապնդում են իրենց իշխանությունը Վասպուրականում, ապա հայտնվում հակաարաբական ապստամբությունների առաջատար դիրքերում: Չնայած ներտոհմական հակասություններին՝ նրանք արաբական տիրապետության ժամանակաշրջանում կարողանում են բարձրացնել իրենց քաղաքական կշիռը, որը զիջում էր միայն Բագրատունիներին, երբեմն համագործակցում վերջիններիս հետ, այնուհետև հավակնում համայն հայոց թագավորություն ստանձնելու դերին, որը, սակայն, նրանց չի հաջողվում, իսկ Վասպուրականը միառժամանակ հայտնվում է Բագրատունիների թագավորության կազմում, որը, իհարկե, երկար չի տևում:

Ի վերջո Արծրունիները հասնում են Վասպուրականի թագավորության ստեղծմանը, որի հիմնադրման և զարգացման պատմությանը ևս Բ. Հարությունյանի ուշադրությունից չի վրիպում: Այս առնչությամբ նա դրսևորում է նոր մոտեցումներ, որոնք կարևորվում են ոչ միայն Արծրունիների տոհմի պատմության, այլև առհասարակ հայոց պատմության այս ժամանակահատվածի համար: Գագիկ Ա-ին նա ներկայացնում է իբրև լուրջ և դիվանագիտական հակումներ ունեցող անձնավորություն, որը, լինելով քաղաքական ազդեցիկ գործիչ, միաժամանակ նվիրված է եղել մշակութային գործի զարգացմանը: Նրա գործունեությանը վերաբերող հեղինակի մեկնաբանությունները համոզում են, որ նա նախ պայքարում էր օտար նվաճողների դեմ՝ ընդարձակելով իր տիրույթների սահմանները, որից հետո հանդես էր գալիս որպես համայն հայոց թագավորի հավակնորդ: Բագրատունիների հետ առճակատման դիմելու փորձի յուրօրինակ մեկնաբանման ընթացքում, երբ վեր են հանվում նաև Սմբատ Ա-ի սխալները, հեղինակը կարողանում է ճշգրտորեն ցույց տալ Յուսուֆ ամիրայի քաղաքական նկրտումները, Սմբատի դեմ Գագիկ Ա-ին հրահրելու պատճառները, որոնք վերջինս բարեբախտաբար կռահում է, և ի վերջո կարելի է պնդել, որ հայության շահերը ստորադասում է անձնական ձգտումներին: Ապա հեղինակը վեր է հանում Վասպուրականի թագավորության բարդ ու հակասական պատմության ընթացքը, մինչև դրա ցավալի ավարտը, երբ Սենեքերիմը բյուզանդական դավադրությունների և ճնշումների հետևանքով տեղափոխվել է Սեբաստիա: Վասպուրականի թագավորության հանձնումը Սենեքերիմի կողմից նա համարում է «ցավագին քայլ, որը դժբախտաբար հետևորդներ ունեցավ ի դեմս այլ հայ արքայիկների» (էջ 223):

Վերջապես, Բ. Հարությունյանը մեծ ուշադրություն է դարձնում նաև Արծրունիների գործունեությանը Վասպուրականի թագավորության անկումից հետո, առավել ևս, որ նրանց պատմության այս ժամանակահատվածը խորությամբ չի մատուցվել ընթերցողին: Ցանկանում ենք առանձնացնել հատկապես Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում Արծրունիների հաստատվելու ուսումնասիրությունը, որը կատարվել է աղբյուրագիտական առատ նյութի և գիտական աշխատությունների քննական վերլուծության հիման վրա: Հետաքրքիր են նաև Վասպուրականի թագավորության անկումից հետո Արծրունիների տոհմի շառավիղների, մասնավորապես Խեղենեկյանների պատմության մի շարք մութ էջերի լուսաբանումները:

Նախքան եզրափակելը հարկ ենք համարում նշել, որ այս գրքում հայոց պատմության մի շարք կարևոր իրադարձությունների վերաբերյալ հեղինակի առաջադրած՝ փաստարկված և տրամաբանված միանգամայն նոր պատմագիտական հայեցակարգերը հիմնականում ընդունելի են:

Բ. Հարությունյանի սույն աշխատությունը, որը լույս է տեսել շնորհիվ պատմական գիտությունների թեկնածու Արտաշես Շահնազարյանի տքնաջան աշխատանքի, գնահատելի ավանդ է հայ պատմագիտության մեջ, որի համար անհրաժեշտ ենք գտնում նրան հայտնել մեր երախտագիտությունը:

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ